

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 5 բաբլ, կէս տարեկանը 3 բաբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատթորեանի խանութում:

Օտարադադաքայից դիմում են ուղղակի
Тифлис, Редакция

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզվով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառից մի կօպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բնական հարստութիւնն երկրի աւել-
րողները:—Ներքին տնտեսութիւնն աւել-
ւելիքի պահանջ: Փաստաբանները նոր իրա-
ւունք: Նամակ չին-Նախիջևանից: Ներքին լու-
րեր:—Արտաքին տնտեսութիւն: Քաղաքա-
կան տնտեսութիւն: Նամակ Ցիւրիխից: Նամակ ֆա-
րիզից:—Խառն լուրեր:—Ցայտարարութիւն-
ներ:—Ցեղեկացոյց:—Բանասիրական: Քա-
հանաների ժողովը Ցիւրիխում:

ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԻՐՈՂ- ՆԵՐԸ

Իրար մէջ վերջին ժամանակներս անձնա-
կանութիւնների համար կռուող ուսուցիչները
«Труд»-ում և վրաց «Իրօբեան» լրագրի-
ները, միմեանց մէջ միացել են, որ յարձակվեն
«Մշակի» դէմ, ազնուականների բանկի
մասին տպւած յօդվածի վերաբերութեամբ:

Մենք աւելորդ ենք համարում մի առ մի
պատասխանել այն բոլոր կէտերի վրա, որոնց
մասին մեզ մեղադրում են, այլ աւելի օգտա-
ւէտ ենք համարում ընդարձակել հարցը, պար-
զելով մեր յայտած մտքերը:

Մեր յօդվածի նպատակն էր ընտղական
հայեացք գցել մեր կալուածատէրերի դասի
անտեսական գործունէութեան վրա, կամ ա-
ւելի լաւ է ասենք, մեր երկրի տնտեսական
վիճակի վրա: Եթէ մենք մեր յօդվածում
յիշեցնենք զխաւորապէս ազնուականներին,
այդ այն պատճառով է, որ դրանք են զխաւոր
դեր խաղում մեր կալուածատէրերի կարգում,
դրանց ձեռքով է հիմնվել և ուրեմն դրանց
օգուտները աչքի առաջ ունեւում զխաւորապէս
կը ծառայէ ազնուականների կալուածա-
ծական բանկը, — որովհետեւ մի կողմից
դրանք են կաղում կալուածատէրերի բազմու-
թիւնը, իսկ միւս կողմից, կամայ ակամայ դրանց
պէտք է համարենք առաջադէմ մասը
կալուածատէրերի թւում...:

Իայց դիցուք, թէ մենք գրել ենք մեր յօդ-
վածը, բաւական ուսումնասիրած չը լինելով
հիմնով ազնուական բանկի կանոնա-

դրութիւնը, դիցուք թէ սխալ ենք արել չը
յիշելով որ գումարները փոխ կը արվին Թիֆ-
լիսեան նահանգի բոլոր կալուածատէրերին
առանց խտրութեան հասարակական դասա-
կարգերի մէջ, — միթէ այդ կարող է փոխել
այն իրողութիւնը, որ մեր երկրի տնտեսու-
թիւնը շատ ողորմելի դրութեան մէջն է, որ
կրէրիտը ապարդիւն է այն տարրի ձեռքում,
որ չէ պահպանում և բարւոքում ունեցածը
այլ վաճառում է...:

Մենք պատրաստ կը լինենք խոստովանել
մեր սխալը՝ որ գործածեցինք մեր յօդվածի
մէջ մեծ մասամբ ազնուական բառը, փո-
խանակ անդադար կալուածատէր բառը
կրկնելու, բայց թող և մեր հակառակորդները
գնեն իրանց ձեռքը խղճմանը վրա, նային
իրանց չորս կողմը և խոստովանեն հետեւեալը՝

Մեզանում կալուածատէրը եթէ անտառ
ունի արդեօք նպատակ է դնում իրան պահ-
պանել այդ բնական հարստութիւնը, դարձնե-
լով նրան իր համար արդիւնքի անսպառելի
աղբիւր, — ոչ, եթէ մեր կալուածատէրը ան-
տառ ունի, կամ նա բոլորովին թողնում է
նրան առանց նրանից մազի չափ օգուտ բա-
ղիւր, կամ ամբողջութեամբ կտրում է, ու
միանգամայն ոչնչացնում է: Եթէ նա բերրի
հող ունի, նա այնքան է անուժ, որ սպա-
ռում է նրան բոլորովին ու անբերրի է դարձ-
նում: Եթէ, նա աշխատողներ ունի, նա սպա-
ռում է նոցա բոլոր ոյժը, ծծում է նրանց
բրտիքի վերջին կաթիլը, ու աղքատացնում է
նրանց:

Այս է մեր կարծիքով սեփականատէր լի-
նել մենք այդ խօսքը ուրիշ կերպ ենք հաս-
կանում, քան թէ կրթված երկրներում:— մեր
մեծ մասի կարծիքով սեփականատէր լինել
նշանակում է սպառել իր բոլոր ունե-
ցածը, աւերակ և անպատ դարձնել իր
չորս կողմը եղածը: անխնայ ոչնչացնել մեր ան-
ձնական գումարնութեան համար ինչ որ մեր
ձեռքը կրկնի է այսպիսով մեր հետեւից թող-
նելով աւերման հետքերը, տանել մեզ հետ գե-

րեղմանը այն փառքը, որ մենք ապրեցինք ա-
պագայ սերունդի հաշւով:

Թող չը մոռանան մեր հակառակորդները
որ այդ երեւոյթը միջ հայերիս և վրացիներիս
միայն սեփական չէ, որ նա սեփական է բոլոր
ամրական ազգերին: այսպիսով էլ ընկան և
ոչնչացան ամրական մեծ պետութիւններ՝ ա-
նպատ դարձնելով երկիրը, սպառելով, ամեն
սերունդը իր համար, բնութեան հարստու-
թիւնները և վերջը ստիպելով ժողովուրդը
զաղթել օտարութեան մէջ...:

Այն տնտեսութիւնը որ մենք հայերս և
վրացիներս վարում ենք, գիտական, եւրո-
պական մի որոշ տէրմին ունի՝ վայրենի
տնտեսութիւն:

Իսկ երկու լրագրիների ակնարկութիւնների
վրա, թէ մենք բանկի խնդրի մէջ կանգնել ենք
մեր բուրժուական տնտեսութեան հարստա-
հարողների կէտի վրա, — սորան մենք պատաս-
խանում ենք միայն արհամարհանով: «Մը-
շակի» երեք տարվոյ գործունէութիւնը հա-
կաւան է վկայում...:

Վրաց «Իրօբեային» մենք կը պատաս-
խանենք, որ մենք շատ լաւ գիտենք ինչ ենք
առում և կարծում ենք, որ «Իրօբեան» էլ
պէտք է շատ լաւ հասկանաւոր, որ Թիֆլի-
սեան նահանգի վրաց ազնուականների ասելով,
մենք չենք կարող մոռանալ որ սրանց մէջ
կան շատ և շատ հայեր, որք իրանց ան-
հաշիւ, աւերող տնտեսութեամբ վրաց ազգա-
նուններ ունեցող ազնուականներից բարձր չենք
համարում:

Թիֆլիսի նահանգի 1700 կալուածներին
400 միայն Պրիկազուսն են զրաւ դրած, ա-
սում է վրաց լրագիրը և նրա խօսքերը կրկն-
նում է և ուսու լրագիրը, բայց ոչքան մեր
կալուածներից զրաւ դրած են և կրկին զրաւ
դրած և փչացրած մասնաւոր ձեռքերում, —
այդ չեն տեսնում...:

Վերջացնում ենք մեր խօսքը... Մենք մեր
յօդվածով չենք յայտնել թէ չենք համարում
բանկի գաղափարին, մենք համոզված ենք որ

կրէղիան է, այդ, ամեն տնտեսութեան, ար-
դիւնագործութեան, առուտուրի մղողը, կրէ-
ղիան է տնտեսականութեանը կեանք տուողը...
բայց կրէղիան անկարող է փոխել հակառակ-
սական տարրի բնաւորութիւնը, այն տարրի,
որ սովորել է անասան կամայականութեամբ
վաճակել իր ունեցածը, աւերել բնութեան հա-
րստութիւնները, մոռանալով իր պարտաւո-
րութիւնները և յանդգնաբար արհամարհելով
մարդկութեան ապագայ սերունդի անբռնա-
բարելի իրաւունքները...:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՌԵԼԻՔԻ ՊԱՀԱՆՁ

Մենք շատ անգամ մեր լրագրի մէջ կոչ-
կասի անտառների մասին խօսելով, աշխատե-
ցինք նկարել մի պատկեր որ դուռ հիւսու է
իրականութեան մէջ եղած տխուր տեսարանը
ներկայացնելուց:

Փանի գնում է մեր երկիրը, այնքան աւելի է
զրկվում բնական զարդից և մի և նոյն ժա-
մանակ ամենամատչելի վառելիքից: Արդէն
այժմ կան կովկասում շատ տեղեր, ուր փո-
խանակ փայտի գործ են ածում կիզակներ
(աթառ) կամ ստիպված են շատ անգամ ամա-
նադժուար ճանապարհներով, որոնք ձմեռը
բոլորովին անանցանելի են դառնում երբեմն,
հիւսու տեղերից բերել իրանց գործածութեան
հարկաւոր փայտը:

Իայց այն ինչ վառելիքը նկատելի կերպով
նուազվում է, մի և նոյն ժամանակը նրա պա-
հանջը աւելանում է մեր երկրում:— շինվում
են երկաթուղիներ և դեռ ևս գուցէ շատ կը
շինվին, հիմնվում են գործարաններ, որոնք
թէ և սակաւթիւ են դեռ ևս, բայց յոյս կայ
նրանք էլ կը բազմանան, եթէ մեր երկիրը
դատապարտված չէ մշտնջենաւոր անշարժու-
թեան մէջ միայն կամ անտեսապէս անդունդի
մէջ թաւալելու: Ամեն կողմից մի արժան և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՀԱՆԱՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՑԻՐԻԻԹՈՒՄ

Օգոստոսի 25-ին հաւաքուեցաւ այստեղ Զուլ-
ցերական քահանաների ընկերութիւնը, բաղկա-
ցած մօտ երեքհարիւր անդամներից: Աւելորդ է
խօսել այստեղ առաջին նստերի մէջ առաջար-
կուած հարցերի վրա, որք լուի կրօնական լինե-
լով կարող չէին հետաքրքրի լինել «Մշակի» ըն-
թերդրոյներին: Այս նպատակաւ ևս ուղւում եմ մէջ
բերել այստեղ միայն վերջին օրուայ ժողովում
ասուած ձեռնարկի մի քանի խօսք, այն նպատա-
կաւ միայն, որ ցոյց տամ, թէ ինչպէս են հաս-
կանում Զուլցերիայի քահանաներից շատերը իւ-
րեանց կողմը:

Այդ օրուայ առաջարկուած խնդիրն էր՝ հոգե-
ւորականների դրութիւնը արդի հասարակութեան
մէջ, Առաջին ձառողն էր Յիւսէլ քահանայն,
Թուրքաու կանտօնից: Ահա նորա խօսքերը հա-
մառօտ կերպիւ.

«Մենք տեսնում ենք որ եկեղեցին հետզհետէ ան-
ջատվում է կառավարութենից, իսկ հոգևորակա-
նաց դասը երթալով աւելի մօտենում է աշխար-
հականին: Ներկայի այս և ուրիշ մի քանի հան-
գումանքները աչքի առաջ ունենալով, պիտոյ է
հոգևորականաց կրթութեանը, տալ մի այնպիսի
ուղղութիւն, որ աւելի համապատասխանէր արդի

հասարակութեան պահանջներին: Այդ կրթութեան
մէջ պատուաւոր տեղ պէտք է բռնեն մանկա-
վար ժա կան և բնական գիտութիւնը: Թողու՛նք
այն ընդհանուր պարտականութիւնը, որ
դրուած է ամեն մէկ անհատի վրա, — արդէն մեր
բուն իսկ կողմը պէտք է ստիպէ մեզ աշխատել
հասարակութեան օգտին, ըստ որում հոգևորականը
ժողովրդի մէջ հովիւ չէ, այլ Քրիստոսի պաշտօ-
նեան, և այս էլ ոչ թէ վերացական կերպով միայն,
այլ և իրապէս: Ուստի բաւական չէ, եթէ նորա
գործունէութիւնը սահմանափակուի լուի ծխա-
կան արարողութեանց կամ որ և ինչ ընդհանուր
վերացական պարտաւորութեանց մէջ, այլ պէտք է
հիմնուի իւր ժողովրդի բուն տեղական պիտոյք-
ներին վրա: Հոգևորականին կոչվելէ մանաւանդ,
որ նա ինքը սկիզբ տայ միշտ այնպիսի ձեռնար-
կութեանց, որոնց նպատակն է բարձրացունել ժո-
ղովրդի բարոյականութեան աստիճանը: Իսկ ինչ
որ վերաբերվում է հոգևորականի ընկերական կեն-
ցաղավարութեան, հարկ է ասել, որ նա պէտք չէ
երբեք ինքնիրեն ժողովրդից բարձր բռնէ, այլ
ընդհակառակն՝ նորա հասարակութեան հետ ու-
նեցած յարաբերութիւնը պէտք է լինեն պարզ
և բարեկամական...:

Ուշադրութեան արժանի էին մանաւանդ հետե-
ւեալ վերջին խօսքերը:

«Ել միջին դարերի մէջ չենք, ժամանակը և սորա
հետ զիտութիւնը հակադրաբար յառաջ են գնում:
Այդ արքնից հոսանքի մէջ եկեղեցին կանգուն
պահելու միակ միջոցը մեզ համար՝ ժամանակի
հետ զուգընթաց յառաջ երթալն է»:

Այս ձառը վերջանալուց յետոյ, սկսաւ վիճա-

բանութիւնը: Բէրն կանտօնի քահանաներից մինը
համաձայնեցաւ Յիւսէլի այն մտքի հետ, թէ
հոգևորական դասը հետզհետէ առաւել մօտենում
է աշխարհականին: «Մենք պէտք է աշխատենք
նորից գրաւել ազգի համակրութիւնը, որ կորու-
սինք այն պատճառաւ, որ մենք ժամանակով ա-
ւելի մօտ էինք իշխողների հետ, քան թէ ժողո-
ւրդեան, և դեռ շատ ժամանակ կանցնի մինչև որ
մենք վերադառնանք ձեռքը աչք համակրութիւնը,
որ շատերը սխալուելով վատաբան են կարծում
նոյն իսկ հոգևորականի կողմը ընդունելու:—
Եկեղեցւոյ կառավարութիւնից անջատուելը զբո-
բաղութիւնն չէ մեզ համար, հոգևորականը առանց
անոր էլ կարող է շատ գործ կատարել, եթէ կա-
մենայ: Մենք, որք ինքներս միջ պաշտօնեայք
Բանին ենք անուանում, դեռ լաւ հասկացած չենք,
թէ որչափ բան կարող էինք կատարել միայն լուի
խօսքով... Բայց խօսքով աղբիւր համար մենք
պէտք է առաւել աշխատենք խօսել, քան թէ շա-
ղակաւոր (ծիծաղ հանդիսականաց մէջ):— Յիւս-
տէլի հոգևորականաց կրթութեան մասին յայտ-
նած մտքի հետ ես բոլորովին համաձայն եմ, շա-
հոգևորականների կրթութեան մէջ սակաւ ու-
շադրութիւն է դարձվում սոցա ապագայ կոյման
վրա: Գետոյ խօսելով քահանաների կատարելու
պատշաճ գործերի վրա, աւելցուց. «Քահանայի
նպատակներից մինը պիտի լինի նաև հասարա-
կութեան մտքերի և ձգտողութեանց մէջ աւելի
միութիւն մտցունել, որ է անհրաժեշտ պայման
խրաքանչիւր գործի յաջողութեան: Մեր բնակարանը
պէտք է լինի տուն ապաւինի, հաշտութեան և

միութեան. բայց այս չէ նշանակում, թէ հարկա-
ւոր է ամեն գործի մէջ էլ խառնուել, ինչպէս որ
անում են աւելորդ ջերմութեանը ինչ նաև շատ
պատուական անձինք, և դորանով զանազան հա-
կառակութեանց առիթ են տալիս...:

Սորանից յետոյ մի ուրիշ քահանայ վեր կացաւ
տեղից և իւր չնորհակալութիւնը յայտնելով Յիւս-
տէլի՝ սորա յարուցած կենդանի և թաւմ մտքերի
համար, ասաց քանի մի խօսք, որ աւելորդ չենք
համարում կարճաօտ կերպիւ յիշատակել:

«Ճշմարիտ է, որ հոգևորականի ոյժը կայանում
է այժմ միմիայն նորա անձնաւորութեան մէջ:
Քանի որ հոգևորականը քրիստոնէայ է, այս բառի
բուն աւետարանական նշանակութեամբ,—պատ-
ճառ չկայ վախճալու, թէ նա ժամանակով հա-
սարակութեան մէջ աւելորդ անձն կղանայ: ձըը-
մարիտ քրիստոնէութեան ինչ լինելը մենք, փո-
խանակ խրատական գրքեր տպելու և երկար բա-
րակ քարոզներ տալու,—պէտք է ինքներս, մեր օրի-
նակովը ցոյց տանք, ճշմարիտ կարեկցութիւն ու-
նենալով տկարներին և աղքատների հետ. սոցա
օգտին աշխատելը պէտք է լինի մեր զխաւորը
պատակը: Մեր կոչումն է, ինչպէս պ. Յիւստէլ
ասաց, լինել Քրիստոսի պաշտօնեայ: Նորան ծա-
ռայել այնպէս, ինչպէս որ նա ինքը ծառայեց
Աստուծոյ մեծ ժողովրդին, այսինքն մարդկու-
թեանը—դորա համար հարկաւոր է այժմ ունե-
նալ աւելի լայն հայացք, դու տալիս է մեզ միայն
ժամանակակից դիտութիւնը: Խօսելով քահա-
նայի կենցաղավարութեան մասին՝ յշատ լաւ է,
ասաց, եթէ ամեն մարդ քահանային պատահե-
լիս, գիտնայ անպատճառ որ նա քահանայ է,

սահմանափակ չէր լինում, որ ամեն տարի աշնան ժամանակ յիշեալ կայսերական ագարակն կը բռնակի քանի մը չաբաթ:

„Մատիս“՝ լրագիրը գրում է՝ արտաքին գործոց նախարար լինւմ. Արիֆի փաշան գաւ չաւթու Ղըրիւմ պիտի երթայ Վէհ. Սուլթանին կողմէ Ռուսաց կայսրը բարեկեռւ:

2 (3)

(4) 1

3 (5)

Въ Москвѣ, на Кузнецкомъ мосту, въ домѣ Тверскаго Подворья.

10) Եթէ առնողը առաջին 10 րոպէ միտ.

ԳՐԱՍԵՆՑԱԿԸ ընդունում է նշյալէս ամեն տեսակ կօմիսիաներ, որք վաճառականութեան են վերաբերեալ, ինչպէս փոխանակազօրինելոց ստանալը, նշյալէս ապրանքների մեծ քանակութեամբ (օպտով) առնելը և ծախսելը:

3 (3)

10 40၇၆၄၀၃၂ ၂၅.၈၀

Նոյնպես և այլ ազակեղէն ամաններ, զործարանի գներով, մեծ քանակութեամբ (օգտով) կարելի է ստանալ Պուարէրի աշակու գործարանի պահեստի մէջ Թիւթիսում, Վիփօցովի փառքի վրա, Աթուռում գտնուելում, Լաւերրիտ եղբայրների գրասենեակում № 168. Նոյնտեղ ընդունվում են պատուէրներ և անպահանջ ազակեղէնի համար:

10 (20)

ԹԻՖԼԻՍ. 1874.

ԽՈՒՄԱՆԻՏԱՐԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ